

ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու

Էլ. հասցե՝ aniavetis@inbox.ru

ՀՏԴ 811.19

**ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ՄՏ. ՕՐԲԵԼՅԱՆԻ <<ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՆԳԻՆ
ՍԻՍԱԿԱՆ>> ԵՐԿՈՒՄ**

Բանալի բառեր: Հոլովական զուգաձևություն, հոլով, հոլովիչ, հոգնակերտ մասնիկ, եզակի թիվ, հոգնակի թիվ, բայի սեռ, խոնարհում, դերբայ, ժամանակաձև:

Ключевые слова: Параллельное склонение, аффикс множественного числа, единственное число, множественное число, залог глагола, спряжение, причастие, глагольная форма.

Key words: Parallel case forms, case, case-forming particle, plural-forming particle, singular, plural, gender, conjugation, adverb, tense.

Միջին գրական հայերենի ձևավորման շրջանում լեզվի քերականական համակարգում տեղի ունեցող փոփոխություններն առավել ընդգծված երևում են առանձին հեղինակների երկերում: Այս առումով զգալի նյութ է մատուցում Մտ. Օրբելյանի <<Պատմութիւն նահանգին Սիսական>> աշխատությունը:

Սույն հոդվածի շրջանակներում փորձ ենք արել վեր հանելու Մտ. Օրբելյանի երկում հանդիպող միջինհայերենյան ձևաբանական այն իրողությունները, որոնք ընդհանրացել էին և կայունացման միտումներ էին ցուցաբերում արդեն 13-րդ դարում:

Մտ. Օրբելյանի <<Պատմութիւն նահանգին Սիսական>> աշխատության լեզուն հիմնականում գրաբարն է, սակայն նրանում արտացոլվել են նաև միջինհայերենյան քերականական իրողություններ, ինչը ժամանակի լեզվամտածողության ազդեցությունն է: Երկում առավել հաճախ միջինհայերենյան իրողություններ հանդիպում են մեջբերված գրություններում /ընծայագրեր, կալվածագրեր, պայմանագրեր և այլն/, որոնց հեղինակը Մտ. Օրբելյանը չէ: 9-12-րդ դդ. թվագրված գրությունները վկայում են, որ դեռ հին հայերենի ընդերքում գրաբարի քերականական ձևերը շեղումներ են ցուցաբերում, իսկ որոշ իրողություններ էլ օրինաչափության են վերածվել համեմատաբար վաղ շրջանում:

Միջին հայերենում քերականական համակարգի փոփոխությունները ներառում են հիմնականում ձևաբանական իրողություններ:

Հոլովման համակարգը. Միջին հայերենի հոլովման համակարգն էականորեն տարբերվում է հին հայերենի հոլովման համակարգից: Ի տարբերություն գրաբարի՝ միջին հայերենում զարգանում է հոլովման կցական կառուցատիպը: Այն դրսևորման նոր ձևեր և արտահայտություններ ուներ, որոնք Ստ. Օրբելյանի երկում առավել քան ընդգծված են:

Միջին հայերենի հոլովման համակարգում գերակշռող էր **Ի** հոլովումը. լեզվի զարգացման այս շրջանում բառերի մեծ մասը հոլովվում է նաև **Ի** հոլովիչով՝ անկախ նրանից, թե գրաբարում ո՛ր հոլովման է պատկանել: Սկզբնական շրջանում դա հանգեցրեց *հոլովական գուգաձևությունների*, իսկ ժամանակի ընթացքում բառերի մեծամասնությունը պահպանեց միջինհայերենյան **Ի** հոլովիչը: Քննվող երկում **Ի** հոլովիչը կենսունակ գործածություն ունի հատուկ անունների /անձնանունների/ հոլովման ժամանակ:

Հատուկ գոյականներ.

ա/ Ո/Ի - Եւ էր ի նմա գրեալ ամենայն ճշդիւ զի առաջին եպիսկոպոս յԱղվանս ի սրբոյն *Գրիգորոյ*¹ Հայոց լուսաւորչէն (2, 22): Հնազանդիմք ձեզ և սուրբ աթոռոյն *Գրիգորի* լուսաւորչին (2, 19): Հիմն արկին սրբոյ կաթողիկէին յիններորդ ամի *Գիւտոյ* երանելւոյն (1, 113): Ապստամբեալ սա ի ... Վահևունի *Գիւտիւ* (1, 103): Վաթսներորդ ութերորդ յամի *Շապհոյ*² Պարսից արքայի (1, 80): Ապստամբեալ սա ի ... Պալունի Վարազ-*Շապուհիւ* (1, 103):

բ/ ՈԲ/Մ/Ի - Որպէս թէ *Յովհաննու* Ոսկեբերանի է (2, 22): Եւ ետու զայս հաստատ նամակս ես տէր Հրահատ ... եւ *Յովհաննայ* ... և Խոտափայ՝ *Յովհաննի* որդւոյ (1, 255): Վերստին հաստատեցի ... եպիսկոպոսին Սինեաց Տեառն *Յովհաննիսի* (2, 50):

Հասարակ գոյականներ .

Ո/Ի - Ջնջեալ զյիշատակ այսմ գեղեցիկ և մեծափառ *այթոռոյ* տէրութեանց (1, 46): Դնի դին նորա ի մեծ սրբարանին և յաստուածաբնակ *այթոռին* Տաթևոյ (2, 44): Հասեալ ի գաւառս Վայոց *ձորոյ* (1, 110): Այգի մի ի Մաճռակայ *ձորի* (2, 171): Մի՞ ախտաւոր մտօք պարսաւեսցիք զի բնութիւն է *մարմնոյ* զթիլ (2, 258): Գտցու ք ողորմութիւն յարարչական սիրոյն Աստուծոյ

¹ Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Միսական, հ.հ. Ա, Բ, Փարիզ, 1859 (այսուհետ փակագծերում կնշվեն Ստ. Օրբելյանի աշխատության՝ այս հրատարակության էջերը):

ի մարմնի (2, 258): Կազմել պահարան *արծայթոյ* (2, 236): Հանեալ զգգեստն եղ ի վերայ *արծաթի* սեղանոյ (2, 185):

Առանձին օրինակներ ուշադրություն են գրավում հոլովման միջինհայերենյան ձևի առումով. նկատվում է գուգաձևության փոփոխություն. *գորտ* բառը, ինչպես վկայում է ՆՀԲ-ն /1, 578/², գրաբարում հոլովվում էր **Ո, ՈԲ, Ի** հոլովիչներով: Միջին հայերենում հոգնակի թվում այս բառը հոլովվում է **Ա** ներքին թեքմամբ, երկում հանդիպում ենք. *Ձի գորտանցն* հրամայել լռել՝ և լռեցին մինչ ցայժմ /2, 95/:

Միջին հայերենում **Ո** հոլովիչից առաջ **Ի** ձայնավորը սովորաբար ընկնում էր և չէր հնչյունափոխվում *ւ*-ի, ինչպես էր գրաբարում. բնագրում *Բջնոյ* /2, 208/, *Բագրատունոյ* /1, 210/ բառաձևերն են հանդիպում *Բջնոյ, Բագրատունոյ* հինհայերենյան ձևերի փոխարեն:

Միջին հայերենում հայցական և գործիական հոլովները կազմության առանձնահատկություն են դրսևորում:

Հայցական հոլովը ձևով նմանվում է ուղղականին. դա վկայությունն է այն իրողության, որ վաղուց արդեն սկսվել էր ուղղական և հայցական հոլովների ձևական նույնացման գործընթացը, ինչը հիմնականում ընդհանրացավ ժամանակակից հայերենում: Երկում մեծ է այն գոյականների թիվը, որոնց հոգնակի հայցականը *-ք* մասնիկը պահպանում է և չի փոխում *-ս*-ի. հանդիպում ենք՝ *զերկնաւորքս* (1, 150), *զվանքն* (2, 45), *զգիրքդ* (2, 169) և այլն:

Գործիական հոլովը միջինհայերենյան շրջանում հոլովիչների առատություն չի ցուցաբերում և մեծ մասամբ կազմվում է *-ուլ* հոլովակերտ մասնիկով, որն ընդլայնում է իր գործառնությունները: Երկում բազմաթիվ են օրինակները, երբ տարբեր հոլովումների ենթարկվող բառերի մեծ մասը գործիականում ստանում է *-ուլ* մասնիկը. հմմտ. Ժառանգել զայդ շէնդ զԱրուսդ իւր սահմանօքն և *ցամաքով* (1, 262): Գաւառ շուրջ *զծովակովն* նոցա էր հասեալ ի բաժին ժառանգութեան (1, 221): Անցեալ ընդ գետն՝ փոքր *ձորակովն* (1, 277): Ետու ես Քուպղիդուխտ զայդ շէնդ լերամբ եւ *դաշտով* (1, 264):

Նման օրինակները վկայում են, որ գործիական հոլովը կայունացել է հոլովակերտ մասնիկի առումով:

Նկատենք, որ *-ուլ* վերջավորության հաճախադեպ գործածությունը առավել հատուկ էր մեջբերվող գրություններին. դրանցում քիչ չէին 9-12-րդ

² Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ. Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հհ. I-II, Վենետիկ, տպ. սրբոյն Ղազարու, 1836-1837 /վերահրատ.՝ Ե., ԵՊՀ հրատ, 1979-1981/:

դարերի թղթերը, որոնց հեղինակները մեծ մասամբ կիրառում էին միջին հայերենում ընդհանրացած այս ձևը. պարզ էր, որ գործիական հոլովի կազմության այս տարբերակը ոչ միայն բանավոր խոսքին էր հատուկ, այլև կայունացել էր գրավոր խոսքում և կիրառվում էր փաստաթղթային գրություններում մինչ 13-րդ դ.:

Հոլովակազմության փոփոխությունները որոշ առումով պայմանավորված են նաև թվի քերականական կարգի արտահայտման նոր ձևով: Միջին հայերենի թվակազմության ժամանակ հոլովիչները կամ հոլովակերտ մասնիկները առավել հաճախ դրվում են հոգնակերտից հետո, օրինակ՝ Եւ զի նա եղել առաջնորդ առման Սիւնեաց եւ այլ *բերդերոյն* (2, 143): Այդ օրինակների թիվը մեծ չէ, սակայն վկայությունն է այն իրողության, որ նախամիջին ենթաշրջանում գրավոր խոսք էին թափանցել քերականական որոշ իրողություններ, որոնք հետո էին գրաբարյան ձևերից և կարող էին դիտվել ժողովրդախոսակցական լեզվի ազդեցության հետևանք:

Դերանվանական հոլովման համակարգում ևս նկատելի են տեղաշարժեր. *մեք* դերանունը բացառական հոլովում հանդիպում է *ի մերմէ, ի մեզնէ* ձևերով՝ գրաբարյան *ի մէջ* ձևին զուգահեռ, ինչպես՝ Յորոց ումանք եւ *ի մերմէ* կողմանէս թիւրեցան /1, 172/: Եհան *ի տանէս մերմէ* /2, 169/: Եւ *ի մեզնէ* յուղարկեցաւ /1, 158/:

Թվակազմության ոլորտում համակարգայնանում են *-էր, -նի, -ներ* հոգնակերտները, որոշ հիմքերի հետ գործածական են դառնում նաև *-ստան, -ք, -ան, -վի* և այլ մասնիկներ³: Գ. Ջահուկյանն այդ հոգնակերտ մասնիկները համարում է գրաբարի համար ոչ տիպական, որոնք բարբառներում, միջին հայերենում և նոր գրական լեզվում տարածված հոգնակերտներ են⁴:

Գրաբարյան *-էար>-էր* մասնիկն առավել գործուն դարձավ միջին հայերենի շրջանում: Ստ. Օրբելյանի երկում հանդիպում են բառեր, որոնց հոգնակին կազմվում է *-էր* հոգնակերտով, ինչպես՝ *գետեր, նաւեր* /1, 227/ և այլն: Իսկ որոշ անեզական բառեր ունենում են և՛ եզակի, և՛ հոգնակի ձևեր: Եզակի թվում պահպանում են *-ք* մասնիկը՝ *վանք*, իսկ հոգնակի թվակազմության դեպքում կորցնում են այն, որի փոխարեն որպես հոգնակերտ մասնիկի ի հայտ է գալիս *-էր-ը՝ վանէր* /2, 221/:

Երբեմն հոգնակերտ մասնիկները հանդես են գալիս նաև զուգահեռաբար: Միջին հայերենում սակավ չէին այն օրինակները, երբ որևէ

³ Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 469:

⁴ Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., 1959, էջ 220:

բառ միաժամանակ ստանում էր մեկից ավելի հոգնակերտներ, որոնք մինևույն բառի սահմաններում կարող են կազմել բազմազան զուգորդումներ, հիմնականում երկու բաղադրիչով, սակավ դեպքերում՝ երեք: Հ. Աճառյանը այս երևույթն անվանում է կրկնակ հոգնակի⁵: Առավել հաճախ կրկնակ հոգնակերտներ կազմվում են –ք հոգնակերտի և որևէ հոգնակերտ մասնիկի զուգադրությամբ: Երկում հանդիպում ենք.

–ստան–եայք –Ձայս ինչ ցուցանել թե՛ քան *զՀայաստանեայս* նախահաւատ երևեցան սոքա (1, 69):

–տի–ք –Գերեցին բազում կանայս և *մանկտիս* (2, 221):

–ան–ք– Զիւր գաւառն եւ *զգեղանսն*, որ ի Վայոց ձոր, կամէր յափշտակել (2, 109):

–ոտի–ք – Ըմպէն զարիւն գազանաց նոյնպէս եւ զամենայն պիղծս եւ կարիճս, զսողունս և *զմեռելոտիս* (1, 198): Զի բաց ծնողութեանն ջեռոյց *զփորոտիս* նորա (1, 101):

Խոնարհման համակարգը: Միջին հայերենում խոնարհման հնատիպ ձևերին զուգահեռ զարգանում ու լայն կիրառություն են ստանում նաև նոր իրողություններ: Բայական համակարգում նկատվում են փոփոխություններ ինչպես եղանակաժամանակային ձևերում, այնպես էլ դերբայական համակարգերում:

Սահմանական եղանակի անցյալ անկատար ժամանակաձևի եզակի III դեմքը երբեմն արտահայտվում է –իւր մասնիկի միջոցով (կրավորական սեռի նշանակությամբ): Այն դրվում է ներգործական սեռի բայերի ներկայի հիմքի վրա, ինչպես՝ Որ եւ ոչ ումեք նիւթեղէն *կարծիւր* (1, 207): Սմբատ նովին խոստովանութեամբ ի մեջ կապանաց եւ արգելանոցի *կատարիւր* բարւոք մահուամբ (1, 216):

Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության ժամանակ որոշ փոփոխությունների են ենթարկվում երրորդ դեմքի *ե* աճականով կազմությունները. հմմտ. Որ *երեստ* զիւր սեպիական զիւղն զԿոկոյս ի սուրբ եկեղեցիս /2, 11/՝ գրաբարյան *եստ* ձևի փոխարեն: *Տալ* բայն անցյալ կատարյալ ժամանակաձևում ենթարկվում է կանոնավոր խոնարհման՝ ստանալով կատարյալի ներգործաձև խոնարհման վերջավորությունները. եզակի թվի առաջին դեմքում խոնարհվում է *տուի* ձևով: Բնագրում 1223 թ. մի գրության մեջ գործածվում է այդ ձևով. Ի սուրբ եկեղեցիս Նորավանից ... և ի սուրբ Նախավկայս *տուի*՝ ազատ յամեն հարկաց /2, 102/: Մեկ այլ գրության մեջ հանդիպում է հիմքակազմության փոփոխություն. *տալ* բայի *տու* հիմքով ձևին զուգահեռ հանդիպում է *տվ*

⁵ Հ.Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Ե., 1957, էջ 828:

հիմքով ձևը⁶, կայունանում է *ու>վ* հնչյունափոխությունը. *Տվի* զիմ հոգւոյ մասն ի յիմ սեփական ուխտս ի սուրբ եկեղեցիս գիւղս 6 /2, 163/:

Հանդիպում են խոնարհման ձևերի փոփոխություններ, որոնցում է աճականով կազմությունները տեղը զիջում են միջինհայերենյան ձևերին, ինչպես՝ *մտաւ* (փոխ. *եմուտ*), *հասաւ* (փոխ. *եհասա*)⁷. Ոչ *գտաւ* զնոսա յԱգարակին (2, 131): *Մտաւ* ի բերդն անառիկ (2, 224): *Հասաւ* յայս տազնապ շփոթի (2, 222):

Բ լծորդության բայերի անորոշ դերբայը գրաբարում ձևով չէր տարբերվում **Ե** լծորդության բայերից, մինչդեռ միջին հայերենում **Բ** լծորդության բայերի անորոշը կազմվում էր *-իլ* վերջավորությամբ, ինչպես՝ Իսկ ի գալն և ի *հանդիպիլն* մեծ արքային Տրդատայ (1, 58): Զի սահման է մարմնոյ ի կենցաղումս հանապազ *սխալիլ* եւ *գթիլ* (1, 102):

Միջին հայերենում այն տարածվել է նաև չեզոք սեռի բայերի վրա, ինչպես՝ Ընդ Մամիկոնէի համապատիւ *եղանիլ* (1, 80): Կամեցան ելանել ի ձեռաց անօրինին եւ փախչել, *անկանիլ* յամուրս աշխարհին իւրեանց (1, 233): Օր ըստ օրէ սկսաւ *նուազիլ* և *պակասիլ* իշխանութիւնն այն (2, 78): Զի մի ոք իշխեսցէ *յանդգնիլ* (2, 48): Վասն որոյ միշտ կարօտի *շրջիլ*, տեսանել, զբօսնուլ, *խնդամտիլ* ի վերայ նորա (1, 81): Այլ փութալ *հասանիլ* վերին արքայութեանն (1, 129):

Միջին հայերենի շրջանում կայունացավ հարակատար դերբայը՝ *-ած* մասնիկով: Այն հանդիպում էր դեռևս գրաբարի նախամիջին ենթաշրջանում⁸:

Երկում հարակատար դերբայը հանդիպում է ինչպես անկախ, այնպես էլ կախյալ կիրառությամբ՝ կազմելով բաղադրյալ ժամանակաձևեր: Անկախ կիրառությամբ երկում հանդես է գալիս որոշյալին արժեքով. Զառաջն նոցա *հաստատած* հայրենիք էր /2, 38/: Այր քաղցր եւ աստուածասէր եւ *յաջողած* յամենայն գործս /2, 61/: Հարակատար դերբայը մասնակցում է բաղադրյալ ժամանակաձևերի կազմությանը. *Ոչ էին կարգած* յաշխարհս Հայոց եպիսկոպոսք /1, 62/: Զի երեք անգամ *հաստատած էին* այս գիւղօրայքս /2,

⁶ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Խ. Ա.Ե., 1972, էջ 351:

⁷ Խոնարհման տիպերի փոփոխություններին հակիրճ անդրադարձել է Ա.Աբրահամյանը երկի աշխարհաբար թարգմանության ներածության մեջ (տե՛ս, Ստ. Օրբելյան, Սյունիքի պատմություն /Ծան. և առաջ.՝ Ա.Աբրահամյանի/, Ե., 1986, էջ 53):

⁸ 915թ. մի գրության մեջ, որը ներառված է երկում, կարդում ենք. *Երկիւղած* բարուցն հաստատել զվերագրեալ վճիռդ երանեալ Տեառն Յովհաննիսի /1, 297/: Կամ՝ 1026 թ. գրության մեջ՝ Յիւր փեղամբարէն *որոշած լինի* /2, 51/:

72/: Զի առաջինն թրով *առած էր* /2, 157/: Նաև այնքան *ողորմած էլ գթած եղև* առ ամենեսեան /2, 173/:

Քննվող երկում սահմանական եղանակի անկատար ներկան իր հիմնական իմաստին զուգահեռ արտահայտում է նաև ժամանակակից հայերենի ըղձական եղանակի իմաստ *ևս*, երբ հանդես է գալիս *թէ, էթէ* շաղկապների հետ, ինչպես՝ *Եթէ այլ ոք հակառակի* /հակառակվի/ այսմ ... *եւ թէ ի տաճիկ աւագութիւն հասանի* /հասնի/ *եւ յափշտակել ջանայ* /ջանա/ /2, 13/: Հետագայում իմաստային այս փոփոխությունը հանգեցրեց նաև եղանակային փոփոխության:

Անկատար անցյալն իմաստային առումով որոշ էական փոփոխություններ է կրել. միջին հայերենի շրջանում *թէ, էթէ* շաղկապներից հետո դրվելով՝ գործածվում է նաև ստորադասական եղանակի ժամանակաձևերի իմաստով՝ ժամանակակից հայերենի ըղձական անցյալի նշանակությամբ, օրինակ՝ *Թէ ժամանակեայ կեանս մարմնոյ եթէ վաճառէր* (վաճառեր) *ոք, եւ հնար էր ինձ գնել և կեալ, յաղագս ցաւոց մարմնոյս* (1, 107): Արտահայտում է նաև հարկադրական և պայմանական եղանակի անցյալ ժամանակի իմաստներ. *Ընդէր այժմ գնէի* (պիտի գնեի) *զդա վասն կելոյ. այլ վաղ իսկ առնուի* (կստանայի) *հանդերձ փառօք եւ մեծամեծ պարգևօք* (1, 108):

Նման օրինակներով հարուստ են հատկապես մեջբերված գրությունները, որոնցում ժամանակի խոսակցական լեզուն առավել ցայտուն է, և երևում է գրաբարյան եղանակների քայքայման, ձուլման և վերաիմաստավորման գործընթացը:

Ամփոփելով Ստ. Օրբելյանը <<Պատմութիւն նահանգին Սիսական>> երկում միջինհայերենյան ձևաբանական իրողությունների քննությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ չնայած գրաբարի լեզվական ավանդույթի պահպանմանը՝ խոսակցական լեզվի քերականական ձևերը թափանցել էին գրաբար հուշարձաններ: Գրական լեզուն ենթարկվել էր խոսակցական լեզվի ազդեցությանը, և միջինհայերենյան քերականական մի շարք իրողություններ կայունացել էին մինչև 13-րդ դարը:

ա/ Հատուկ և հասարակ գոյականներին բնութագրական են հոլովական զուգաձևությունները:

բ/ Երկում հանդիպող գրություններում՝ թվագրված 9-12-րդ դդ., **Ի** հոլովիչի գործածությունը վկայում է, որ դեռևս գրաբարի նախամիջին շրջանում է կայունացել այս իրողությունը:

գ/ Գործիական հոլովի *-ոյ* մասնիկը ընդլայնված կիրառություն է ստանում:

դ/ Գոյականի հոգնակի թիվը կազմվում է միջին հայերենին բնորոշ տարբեր հոգնակերտներով, առավել հաճախ՝ *-էր* հոգնակերտ մասնիկով:

Ե/ Խոնարհման համակարգում սահմանական եղանակի ժամանակաձևերը իմաստային նոր արտահայտություններ և կազմության յուրահատկություններ են դրսևորում:

Ա. Ավետիսյան

ՄԻՋԻՀԱՅԵՐԵՆՅԱՆ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՐՏԱՅՈՂՈՒՄԸ ՍՏ. ՕՐԲԵԼՅԱՆԻ <<ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՆԳԻՆ
ՄԻՍԱԿԱՆ>> ԵՐԿՈՒՄ

Ամփոփում

Ստ.Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» երկի քննությունը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու որոշակի ձևաբանական իրողություններ, որոնք գրավոր խոսքում կայունացել են լեզվի միջինհայերենյան ենթաշրջանում: **Ի** հոլովիչի գործառական հաճախականությունը, գործիական հոլովի՝ **-ու** մասնիկով կազմությունը, հոգնակերտ **-եր** մասնիկի տարածումը, խոնարհման ձևերի նոր կազմությունները, սահմանական եղանակի ժամանակաձևերի իմաստային նոր արտահայտությունները և այլ իրողություններ վկայում են, որ լեզվական ձևերի փոփոխության գործընթացն առավել վաղ շրջանում է սկսվել և կայունացման միտումներ է ցուցաբերել մինչև 13-րդ դարը:

А. Аветисян

ОТРАЖЕНИЕ НЕКОТОРЫХ СРЕДНЕАРМЯНСКИХ
МОРФОЛОГИЧЕСКИХ ЯВЛЕНИЙ В ТРУДЕ СТ. ОРБЕЛЯНА „ИСТОРИЯ
СЮНИКА”

Резюме

Исследование труда Ст. Орбеляна „История Сюника” дает возможность показать некоторые морфологические явления, которые стали устойчивыми в письменной речи в среднеармянском этапе. Частота применения показателя склонения **Ի**, образование творительного падежа с аффиксом **-ու**, распространение аффикса **-եր** образующего множественное число, новые формы спряжения, проявления глагольных форм новым грамматическим значением и другие явления свидетельствуют о том, что процесс изменения языковых форм начался на раннем этапе и проявил стремление становления до 13-го века.

A. Avetisyan

The Reflection of Certain Morphological Facts in Middle Armenian in “The Story of Sisakan Province” by St. Orbelyan

Summary

The analysis of the composition “The story of Sisakan province” by St. Orbelian enables to reveal some morphological phenomena of written Armenian which became stable during the middle ages period of the development of the language. The frequency of the practical usage of the **հ** nominative, the formation of ablative by using morpheme **-ու**, the rapid spread of morpheme **-էր**, with the help of which the plural form was formed, the formation of new conjugation forms, the addition of new grammatical meanings to verbal forms and other facts attest that the process of changing linguistic forms began at an early period and demonstrated a tendency of stabilization by 13 century.